

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍԿԱՆՈՒԹՅԱՆ ՃԻՉԸ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄՔ¹

Սուկրատ Խանյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱրՊՀ

Բանալի բառեր. Հայաստան, ժողովուրդ, երիտթուրքեր, 1915թ., ցեղասպանություն, հայ գրականություն, Մարինա Առստամյան, գերմանական գրականություն, ավստրիական գրականություն, ռեքվիեմ, Արմին Վեգներ, Էդգար Հիլզենրաթ, Ֆրանց Վերֆել:

Համաշխարհային գրականության պատմության մեջ ցեղասպանության թեման սկսեց հոլովվել 20-րդ դարի սկզբից: 1915 թվականի ապրիլի 24-ի Հայոց մեծ եղեռնից հետո գրվեցին եղերերգեր, ռեքվիեմներ, պատմվածքներ, վիպակներ, վեպեր, դրամատիկական երկեր, որոնցում ականավոր գրողները ոչ միայն գեղարվեստորեն պատկերեցին մեր ժողովրդին անարդարացիորեն հասած արհավիրքը, այլև անարգանքի սյունին գամեցին երիտթուրքական ավազակախմբին և գերմանական միլիտարիստներին՝ Վիլհելմ Երկրորդի գլխավորությամբ: Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի խառնաշփոթ իրավիճակից՝ երիտթուրքերը գազազած ամբոխի միջոցով սրի քաշեցին մեկուկես միլիոն անմեղ հայերի՝ իրենց իսկ սեփական հողի վրա, պապենական օջախների հայաշունչ բակերում, մշակած այգիներում, աստվածախոս եկեղեցիների ու վանքերի խորաններում:

Այդ ամենը տեղի ունեցավ աշխարհի խոշոր տերությունների աչքերի առջև: Ցեղասպանությունը դարձավ ոչ միայն մխացող պատմություն, այլև վերածվեց չխամրող ցավի, չլռող արյան կանչի ու մտավ գրականություն՝ ուղղված ապագա սերունդներին: Հայ ժողովրդի անանցանելի այդ վիշտը նկարագրվեց Ա. Ահարոնյանի, Հ. Թումանյանի, Վ. Տերյանի, Ավ. Իսահակյանի, Հ. Մնձուրու, Ե. Չարենցի, Հ. Օշականի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Ջորյանի, Շ. Շահնուրի, Ա. Բակունցի, Համաստեղի, Գ. Մահարու, Ն. Ջարյանի, Վ. Թեքեյանի, Մ. Իշխանի, Խ.Դաշտենցի, Հ. Շիրազի, Պ. Սևակի և մյուս նշանավոր գրողների երկերում: Ստեղծված գեղարվեստական երկերի հիման վրա ուսումնասիրություններ հրատարակվեցին գրականագետների ու պատմաբանների կողմից:

Սակայն Հայոց ցեղասպանությունը միայն հայ ժողովրդի ցավը չէ: Աշխարհի մեծանուն գործիչներն այդ ցավը համարում են մարդկության սիր-

¹ *Չողվածը ընդունված է 10.09.14:

տը բզկտող մի երևույթ, որը չի կարելի մոռացության մատնել, այլապես կարող է կրկնվել՝ ինչպես հրեական Հոլոքոսը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ հիտլերյան Գերմանիայում և Եվրոպայում:

Եվ անհանգիստ այս ժամանակաշրջանում, երբ մեր ժողովուրդը գնում է դեպի Հայոց ցեղասպանության 100-ամյակը, լույս են տեսնում նորանոր պատմագեղարվեստական ստեղծագործություններ և ուսումնասիրություններ, որոնցում հեղինակները պատմության դատին են հանձնում երիտթուրքերին ու նրանց հանցակիցներին, պահանջում նոր Նյուրնբերգ՝ ընդդեմ չարիքի, բռնության, մարդկային անիմաստ ու անմիտ դաժանության: Նման արժեքավոր մի գիրք է «Հայոց ցեղասպանության թեման գերմանական և ավստրիական գրականություններում» աշխատությունը, որը հրատարակվել է վերջերս, ԼՂՀ Ազգային ժողովի նախագահ Ա. Ղուլյանի անմիջական հովանավորությամբ:

Ափսոսանքով նշենք, որ արժեքավոր այս ուսումնասիրության հեղինակը՝ Մարինա Առստամյանը, կյանքից հեռացել է 2012-ին, հիսունը դեռ չլրացած: Մարինան ԱրՊՀ երիտասարդ դասախոսներից էր, դասավանդում էր արտասահմանյան գրականություն: Նշված աշխատությունը նրա ատենախոսությունն է, որի համար արժանացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի: Սակայն, ավաղ, ճակատագիրը դաժան գտնվեց նրա հանդեպ, անբուժելի հիվանդությունը խլեց նրա կյանքը: Սակայն ինչպես ժողովուրդն է ասում՝ մարդը մոռացվում է այն ժամանակ, երբ ոչինչ չի թողնում իր հեռանալուց հետո: Մարինայի տպագրած տասնյակ հոդվածներն ու նշյալ ուսումնասիրությունը արժեքավոր ներդրումներ են մեր մշակութի պատմության մեջ: Նկատի ենք առնում նրա ուսումնասիրության մեջ արժարժված թեմայի արդիականությունն ու արծագանքները ընթերցողների լայն շրջանում: Ինչպես նշում է նշանավոր բանաստեղծ ու գրականագետ Հենրիկ Էդոյանը, Մարինայի գիրքը գրված է «նյութի խոր իմացությամբ, վերլուծական հմտությամբ, գրագետ շարադրանքով, և որ ամենակարևորն է, անկեղծ սրտով, սիրով ու նվիրվածությամբ»:¹

Հիրավի, դժվար ու բազմաշերտ թեմա է ընտրել Մարինան: Նա ուսումնասիրել, վերլուծել ու գնահատել է գերմանացի և ավստրիացի

¹ *Арустамян М. - «Тема армянского геноцида в немецкой и австрийской литературе», Степанакерт, изд. «Дизак плюс», 2013, с. 5.*

հռչակավոր այնպիսի գրողների երկերը, ինչպիսիք Արմին Վեգների հրապարակախոսական ելույթները, նամակները, ուղերձներն ու պատմվածքներն են, Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը», Էդգար Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» վեպերը: Ի դեպ, նշյալ վեպերը թարգմանված են աշխարհի մի շարք լեզուներով, որոնք անգնահատելի ներդրումներ են Հայ Դատի կարևոր գործընթացում:

Աշխատությունը ստեղծելու համար Մարինան ուսումնասիրել ու քննության է արել հարյուրավոր պատմագեղարվեստական սկզբնաղբյուրներ ու կատարել ուսանելի ընդհանրացումներ: Ուշադրության կիզակետում պահելով սկզբնաղբյուրների հասարակական-պատմական արժեքին ամենավոր խնդիրները՝ նա կատարել է այնպիսի մեկնաբանություններ, որոնք կամրջում են դառն անցյալը մարտնչող ներկային ու ներկան՝ ապագային: Ամեն դեպքում Մարինայի մտորումներում մեր ազգային անհինջ ցավն է և տագնապը՝ մարդկության ճակատագրի հանդեպ:

Մարինան կոնկրետ օրինակներով ու գեղարվեստական խոսքի գնահատման կարողությամբ գրքի առաջին գլխում ներկայացրել է 20-րդ դարի գերմանական գրականության հռչակավոր ներկայացուցիչներից մեկի՝ Արմին Վեգների այն գործերը, որոնցում նա բարձրացրել է բողոքի իր ձայնը Օսմանյան Թուրքիայում իրագործված Հայոց ցեղասպանության դեմ: Ա. Վեգները երբեք չի մոռացել այն տառապանքը, ինչ տեսել է մեր ժողովուրդը 1915-1923 թվականների ընթացքում: Նա Լեվսիուսի, Ռոիրբախի, Մորգենթաուի և նման հումանիստ մարդկանց հետ դատապարտել է խոշոր տերությունների քարացած խիղճն ու անտարբերությունը Հայոց ցեղասպանության հանդեպ:

Իրավագիտության դոկտոր Ա. Վեգները ներկայացավ որպես հայ ժողովրդի իրավունքի պաշտպան: Մ. Առստամյանն այդ ապացուցում է Վեգների կրակոտ նամակներով՝ հղված մեծ տերությունների ղեկավարներին: Լինելով Արևմտյան Հայաստանի մահվան ճամբարներում, ականատես լինելով անմեղ հայերի աննկարագրելի տառապանքին, Վեգները վտանգի ենթարկելով իր իսկ կյանքը, իր նամակներով ազդարարեց աշխարհին քաղաքակիրթ հայ ժողովրդի հանդեպ կազմակերպված թուրքական չարագործությունների մասին: Նա, որպես հայ ժողովրդի բարեկամ, հանդես է եկել նաև Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո: Այսպես, խնդրո առարկա գրքի հեղինակը բերում է մի հատված Վեգների՝ 1919 թվականին Բեռլինում ունեցած ելույթից. «Գերմա-

նացիներ, այն իրադարձությունները, որոնց մասին ցանկանում եմ այսօր պատմել, դա մահվան պատմություն է: Այն դժբախտությունը, դաժան տառապանքները, որոնց միջով անցել է հայ ժողովուրդը այս տարիներին, ոչ ոք չի տեսել ոչ այս պատերազմում և ոչ էլ մարդկության ամբողջ պատմության մեջ»¹ Նույն տարում նա նամակ է հղել ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին, որտեղ քննադատել է խոշոր տերություններին Օսմանյան թուրքիայում տեղի ունեցած հայկական ջարդերի կապակցությամբ: Նա այդ նամակում գրել է. «Երբ ես անցնում էի անապատներում փախստականների ճամբարներով, երբ նստում էի նրանց վրաններում մեռնողների ու սովամահ եղողների մոտ, զգում էի նրանց պաղատող ձեռքերը իմ ձեռքերում, այն ժամանակ, երբ լսում էի նրանց քահանաների աղոթքները մի քանի հարյուրի հասնող մեռածներին հողին հանձնելիս, ես ևս աղոթում էի նրանց համար և երդվում՝ երբեք չմոռանալ նրանց»:² Իր մի ուրիշ նամակ-պամֆլետում, որ կոչվում է «Ճիշ Արարատից», Վեգները խստորեն խարազանում է եվրոպական այն տերություններին, ովքեր նպաստել են Օսմանյան թուրքիայում իրականացնելու հայերի ցեղասպանությունը: «Ի՞նչ են արել Արևմուտքի հաղթանակած տերությունները, որպեսզի պաշտպանեն փոքր մի ժողովրդի, որին ոչնչացնում էին իր հավատի ու ոգու պատճառով»:³

Մի քանի տասնյակի հասնող ցասումնալից նամակների վերլուծությամբ Մարինա Առստամյանը ասես ստեղծում է Արմին Վեգների մարդկային ազնիվ կերպարը՝ որպես հայ ժողովրդի մեծ բարեկամ: Վերլուծելով նաև Ա. Վեգների պոեզիան՝ գրված հայկական թեմայով, Մ. Առստամյանը անդրադարձել է նաև Ա. Վեգների «Փոքրիկ Ադամը», «Ներխուժում կանանց բաղնիք» և այլ պատմվածքների՝ հայտնելով այն կարծիքը, որ Հայոց ցեղասպանությունը Օսմանյան թուրքիայում շարունակվել է երեսուն տարի անընդմեջ՝ 1894-ից մինչև 1923 թվականը:

Աշխատության երկրորդ գլուխը Մ. Առստամյանը նվիրել է ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հանրահայտ վեպի վերլուծությանը՝ բնութագրելով ոչ միայն դրական կերպարներին, այլև բացահայտելով հայ ժողովրդի արյունախում դահիճների՝ Թալեաթի, Էնվերի, Ջեմալի գազանային բնավորությունները: Մարինան առանձին

¹ Նույն տեղում, էջ 33:

² Նույն տեղում, էջ 35:

³ Նույն տեղում, էջ 35:

մի խանդաղատանքով է գնահատում վեպի գլխավոր կերպարին՝ Գաբրիել Բագրատյանին, որը Մուսա լեռան հերոսամարտի կազմակերպիչն ու ոգեշնչողն է: Ազատագրելով իր հայրենակիցներին՝ Գաբրիելը մնում է Մուսա լեռան վրա, մինչև վերջին շունչը մարտնչում թուրք հրոսակների դեմ՝ ծուլվելով այն հողին, որտեղ մնջում են իր նախնիները:¹

Ուսումնասիրության երրորդ գլուխը նվիրված է եղգար Հիլզենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» վեպի վերլուծությանը: Այստեղ կարող ենք նշել, որ Մարինան նշանակալից գործ է կատարել՝ առաջին անգամ խորապես ուսումնասիրելով ականավոր այդ գրողի ծավալուն երկը հայ ժողովրդի անցած ճանապարհի և նրա ճակատագրի մասին:

Մարինա Առստամյանը գրականագիտական հմտությամբ դիտարկում, վերլուծում ու գնահատում է անսովոր կառուցվածք ունեցող մի վեպ, որի թեման վերցված է 1915 թվականի օգոստոսին՝ բռնագաղթի ճանապարհին ծնված մի որբի և նրա ծնողների՝ Վարդան Խատիսյանի և Անահիտի կրած տառապանքների մասին:

Ինչպես հանգամանալից պատմում է Մարինան, Հիլզենրաթն ուսումնասիրել է հայ ժողովրդի դարավոր պատմությունը, միաժամանակ ծանոթացել Օսմանյան Թուրքիայի թուրք ազգաբնակչության կենցաղին ու բարքերին և ստեղծել մի երկ, որն արժեքավոր ներդրում է Հայոց ցեղասպանության իրական պատմության մեջ: Ուսումնասիրության հեղինակը բերում է գրողի հետևյալ խոսքը. «Թուրքահայաստան կոչված երկրում հայերն ապրում են իրենց բնիկ հայրենիքում: Իր ստեղծարար գործով հայը շենացնում է այդ երկիրն ու թուրք ժողովրդի կյանքը: Հայ կոշկակարը քաղաքակիրթ և ճտքավոր ոտնամաններ է հագցնում բոբիկ և տրեխավոր թուրքական բանակին: Մյուդիր-բեյը՝ ոստիկանապետը, գանգատվում է, որ իր համար կոշիկ կարող հայ վարպետին սպանելուց հետո այլևս իր ոտքին հարմար կոշիկ չի գտնում: Բայց արհեստավոր ու շենացնող հայը գրգռում է այլատյաց ու մոլագար թուրք ամբոխին: Ադ ամբոխը նախանձում է հայ կանանց նրբակիրթ ոտքերին, որոնք սովոր են մետաքսե գուլպաների»:

2015-ին կնշվի մեր ազգային այդ անանցանելի կորուստների 100-րդ տարին: Սակայն դա միայն տառապանքի մխացող հիշողություն չէ: Հայ ժողովուրդը պահանջատեր է, նա այսուհետ ևս պահանջելու է, որ

¹ Նույն տեղում, էջ 145:

թուրքական իշխանությունները ճանաչեն 1915 թվականին իրենց նախորդների կազմակերպած Հայոց ցեղասպանությունը և ներողություն խնդրեն հայերից: Սակայն ինչպես հայտնի է, թուրքական կառավարող շրջանները ձգտում են չճանաչել այն և ամեն կերպ շրջանցում են այդ երևույթը՝ պնդելով, որ Թուրքիայում ընդհանրապես ցեղասպանություն չի եղել:

Մարինա Առստամյանի «Հայոց ցեղասպանության թեման գերմանական և ավստրիական գրականություններում» ուսումնասիրությունը ոչ միայն կարևոր ներդրում է մեր ժողովրդին հուզող պատմության մեջ, այլև շառաչող ապտակ է ժամանակակից Թուրքիայի այն ցինիկ ղեկավարներին, ովքեր ձգտում են ժխտել իրենց նախնիների հանցագործությունը՝ իրենք իսկ դառնալով հանցակիցներ, վտանգելով մարդկության խաղաղ-ստեղծարար կյանքը:

Սակայն, ինչպես ասված է, կրակ էլ տաս, ճշմարիտին մահ չկա: Հայոց ցեղասպանությունը ճանաչել են աշխարհի երկու տասնյակից ավելի պետություններ: Գալու է օրը, երբ թուրք ժողովուրդը ներողություն է խնդրելու հայ ժողովրդից:

Այդ ոչ հեռու ժամանակի համապատկերի վրա ճչալու են այն առաջադեմ գործիչները, ովքեր ցավով գրել են Հայոց ցեղասպանության մասին, ինչպես նաև այնպիսի գրքեր, ինչպիսին Մարինա Առստամյանի ուսումնասիրությունն է:

Ամփոփում

Սույն հոդվածում քննարկվում է ԱրՊՀ երջանկահիշատակ Մարինա Առստամյանի «Հայոց ցեղասպանության թեման գերմանական և ավստրիական գրականություններում» ուսումնասիրությունը:

Հոդվածի հեղինակը նշում է, որ Մ. Առստամյանը հանգամանորեն ուսումնասիրել է գերմանացի հռչակավոր գրողներ Արմին Վեգների հրապարակախոսական ելույթները, Էդգար Հիլգենրաթի «Վերջին մտքի հեքիաթը» վեպը, ավստրիացի Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» ստեղծագործությունը և ընդհանրացրել, որ համաշխարհային հանրության պահանջով թուրք կառավարիչները պետք է ճանաչեն Հայոց ցեղասպանությունը, դրանով իսկ կկանխվեն ցեղասպանությունները ժամանակակից աշխարհում:

"Крик Армянского геноцида в новом освещении".

Ханян Сократ

Резюме

Ключевые слова: Армения, народ, младотурки, 1915г, геноцид, армянская литература, Марина Арустамян, немецкая литература, австрийская литература,реквием, Армин Вегнер,Эдгар Илзенрата, Франц Верфель.

В данной статье обсуждается книга Марины Арустамян: “Тема армянского геноцида в немецкой и австрийской литературе”.

Автор статьи отмечает, что М. Арустамян тщательно исследовала публицистические выступления, письма и обращения писателя Армина Вигнера и роман “Сказка о последней мысли” Эдгара Илзенрата, знаменитое произведение австрийца Франса Верфеля "Сорок дней Муса - дага”. Делается вывод о том, что под влиянием мировой общественности турецкие правители должны признать армянский геноцид, предотвращая этим повторение геноцида в мире.

"Scream of the Armenian Genocide in a new light"

Sokrat Khanyan

Summary

Keywords: Armenia, the people of the Young Turks in 1915, the genocide, Armenian literature, Marina Arustamian, German literature, Austrian Literature, Requiem, Armin Wegner, Edgar Hilsentrath, Franz Werfel.

This paper discusses the book of unforgettable Marina Arustamian. The subject is Armenian genocide in German and Austrian literature. The author of the article notes that M. Arustamian scrutinized journal articles, speeches, letters and appeals of writer Armin Wigner and the novel "The Tale of the last thought" of Edgar Hilsentrath and the famous work of Austrian Franz Werfel "Forty Days of Musa Dagh".

Generalized that under the influence of the international community the Turkish rulers must recognize the Armenian genocide, preventing the recurrence of genocide in this world.